

ԳՐՁԻ ԵՎ ՍՏԱՑՈՂԻ ՄԻՋՆՈՐԴԸ

(Վաճառքի համար նախատեսված գիրքը միջնադարյան Հայաստանում)

4. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ձևագրերի պատվիրման, վաճառքի, գնի, գրչի և պատվիրատուի հարաբերությունների հետ կապված հարցերը կարևոր են ձևագրագիտության համար և տարբեր ժողովուրդների ձևագրական մշակույթի առնչությամբ առավել կամ պակաս չափով ուսումնասիրված են¹։ Մեզանում այդ հարցերը շոշափվել են գրչության, միջնադարյան արհեստներին ու առևտրին նվիրված աշխատություններում²։

Ստորև կանդրադառնանք Հայաստանում վաճառքի համար նախատեսված ձևագրերի երևան գալուն, ինչպես նաև մի այնպիսի ինքնատիպ երեվույթի, ինչպիսին դրչի և ստացողի փոխհարաբերություններում հանդիպող միջնորդությունն է, որն իրականացրել են համապատասխան միջնորդները։ Բազմաթիվ հիշատակալրաններ վկայում են, որ գոյություն են ունեցել գրչի (ձևագրերի ստեղծողների) և ստացողի (որը կարող էր լինել պատվիրատու կամ գնորդ, մեկ կամ մի քանի մարդ, անգամ մի ողջ գյուղի բնակչություն) միջև կապ ստեղծող միջնորդներ, որոնք մի կողմից աջակցել են գիրք ձևաբերել ցանկացողին, մյուս կողմից՝ օժանդակել գրչին, որ իր աշխատանքով կարողանա հոգալ սեփական ապրուստը։ Միջնորդի դերի քննությունն ինքնին հետաքրքիր լինելուց բացի, զգալի չափով բացահայտում է միջնադարյան Հայաստանում գրավաճառության գործի յուրօրինակությունը, մասնավորապես վաճառքի համար նախատեսված ձևագրերի օտարման սկզբունքը։

Ձևագրի ձևաբերելու ավանդական, ընդունված եղանակն այն էր, որ ստացողը նախապես պատվիրում էր իրեն անհրաժեշտ գիրքը, գրչի, նկարչի, կազմարարի հետ պայմանավորվում վճարի, գրանյութի, այլ մանրամասների շուրջ և որոշ ժամանակ անց, մատյանի պատրաստ լինելուց հետո, ստանում էր այն։ Բազմաթիվ են նաև դեպքերը, երբ ցրիչները ձևագրեր են ընդօրինակել անձնական օգտագործման համար։

Միջնադարյան հասարակության ընդհանուր զարգացմանը, գրքի պահանջարկի աճին ղուգրնթաց, պատվիրված և անձնական օգտագործման համար ստեղծված ձևագրերից բացի ի հայտ եկավ նաև վաճառքի համար նախատեսված գիրքը, հրր ցրիչը ձևագիր էր ընդօրինակում առանց որոշակի ստացողի առկայության և դիրքն ավարտելով վաճառում էր համապատասխան դնորդի։ Այս հրիույթը, որը XIII դարի հայ ձևագրական մշակույթի նորություններից էր, չպետք է շփոթել հին գրքի վաճառքի հետ, երբ ստացողը, կամ նրա ժառանգներից մեկը, հետագա ստացողը, ձևագիրը վաճառում ու վերավաճառում էր մեկ ուրիշի։ Բնականաբար գրիչը, ձևագիր

¹ И. Лебедева. Кодикология—наука о рукописных книгах.—Вспомогательные исторические дисциплины, Л., 1972, с. 67; Б. Сапунов. Книга в России в XI—XIII вв. Л., 1978, с. 84—110; Л. Киселева. Западноевропейская рукописная и печатная книга XIV—XV вв. Л., 1985, с. 9—14, 245—250; Л. Владимиров. Всеобщая история книги. М., 1988, с. 73—74 և այլն։

² Բ. Առաքելյան. Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX—XIII դարերում. հ. Ա., Նրևան, 1953, էջ 303—321, Ա. Արրահամյան. Հայոց գիր և գրչություն. Նրևան, 1973, էջ 301—331։

ստեղծողները նման գործարքի հետ որևէ առնչություն չունենին, մինչ վաճառքի համար պատրաստվող մատյանները սոցիալ-մշակութային զարգացման մի ողջ ընթացք են խորհրդանշում: Բանն այն է, որ դեռ X դարի վերջերից Բագրատունյաց Հայաստանում քաղաքական կայունության, տնտեսական վերելքի, արհեստների ու առևտրի զարգացման, դրամական շրջանառության ընդարձակման պայմաններում, մի կողմից հիմնվեցին նոր վանքեր ու գրչատներ, գրքի պատվիրատուների թվում հոգևորականությանն ու աղնվականությանը միացավ ունևոր քաղաքացիությունը, մեծացավ ստացողների հետաքրքրությունների ոլորտը, մյուս կողմից՝ առաջացան ձեռագրերի քանակական աճին նպաստող նյութական ու գործնական նախադրյալներ՝ մագաղաթից բացի կիրառության գտավ նաև թուղթ գրանյութը, երկաթագրին գուգահեռ լայն գործածություն ստացավ մանրատառ ու դուրադիր բոլորգիր ռոտոնսակը, սկսեցին օգտագործվել բնագրի ընթերցանությունն ու մատչելիությունը հեշտացնող նշաններ, աղյուսակներ, պատկերներ և այլն: Այս ամենի շնորհիվ հասարակական կյանքում ձեռագիր գիրքն ավելի մասնալական ու կարևոր դեր ստացավ:

Բագրատունյաց անկմամբ ժամանակավորապես խոչընդոտված այս գործընթացը վերսկսվեց XIII դարի սկզբներին, բայց արդեն մասամբ փոփոխված միջավայրում, առևտրատնտեսական հարաբերությունների խորացման և դրամի դերի աճի պայմաններում: Այս պատմաշրջանում հայ քաղաքային կյանքի առաջատար կենտրոնը ծաղկուն ու կենսասեր Անին էր և պատահական չէ, որ այստեղից են սերում, մեզ հայտնի, վաճառքի համար նախատեսված վաղագույն ձեռագրերը: Սակայն մինչև դրանց անդրադառնալը տեսնենք, թե գրականության մեջ ինչ ընդլայնվել է տրվել նման ձեռագրերին և ինչպես է ներկայացվել բուն վաճառքը: Բ. Առաքելյանը նշում է, որ գրիչները ձեռագրեր էին ընդօրինակում պատվերով, սովորաբար երկրպագիր գրչությամբ, պարզապես շուկա՝ վաճառքի հաճելու նպատակով՝ բոլորգրով ... շուկայի համար են արտագրվել այն ձեռագրերը, գտնե՞րք դրանց մեծ մասը, որոնց մեջ ոչ մի հիշատակություն չկա պատվիրատուի, անգամ ստացողի մասին, այնուհետև եզրակացնում է. «Գիրք պատրաստելու հետ կապված մի քանի արհեստներ դարձել էին ապրուստի միջոց, ոչ միայն պատվիրատուից վարձատրություն ստանալու, այլև գրքեր պատրաստելու և շուկայում վաճառելու եղանակով»³: Ա. Արրահամյանն ավելացնում է, որ վաճառքի համար նախատեսված ձեռագրում երբեմն գրիչը «ընդօրինակություն վերջացնելուց հետո գրում է հիշատակարանի ընդհանուր, կանոնականացված մասը, իսկ պատվիրատուի անվան տեղը բաց թողնում: Անուագիրը հաճում է շուկա և այնտեղ վաճառելու դեպքում, անմիջապես ավելացնում պատվիրատուի անունը և հանձնում նրան»⁴:

Իրոք, վաճառքի համար նախատեսված ձեռագրերի (ինչպես և տնտեսական օգտագործման համար գրված մատյանների) մեծագույն մասում գործածվում է բոլորգիր գրատեսակը: Դրանցում հիշատակարաններ գրվում էին այն ժամանակ, երբ հայտնի էր դառնում ստացող-գնորդը, կամ էլ հիշատակարանում բաց էր թողնվում ստացողի անվան տեղը (նաև մի քանի տող՝ նրա ազգականների թվարկման համար), որը լրացվում էր վաճառքից հետո: Ինչ վերաբերում է ձեռագրերի «շուկայում վաճառելու, շուկա հանելու» մասին նշումներին, ուր դատելով ենթատեքստից, շուկան «վաճառքի վայր» նեղ իմաստով է օգտագործվում, ոչ թե «վաճառքի ոլորտ» լայն իմաստով, ապա այդ դրույթը չի հաստատվում որևէ փաստով: Հայերեն ձեռագրերի տասնյակ հազարավոր հիշատակարաններում չկա նորաստեղծ ձե-

³ Բ. Առաքելյան. *Նշվ. աշխ.*, էջ 313—315 (այս և հաջորդ մեջբերումներում կատարված բոլոր ընդգծումները մերն են—Կ. Մ.):

⁴ Ա. Արրահամյան. *Նշվ. աշխ.*:

ռազիրը շուկա-վաճառանոցում վաճառելու հիշատակություն, այդպես կարող էին վաճառվել միայն գերեզմանավաճառման մասին:

Իսկ ինչպե՞ս է իրականացվել ձեռագրի վաճառքը: Այս հարցը պարզելու նպատակով է միջնորդի դերի քննությունը, թեև գրքի վաճառքի գործարքը կարող էր կատարվել գրչի և գնորդի միջև, առանց որևէ միջնորդի: Հարկալի է նշել նաև, որ միջնորդության կիրառությունը չի կապվում սոսկ վաճառքի համար նախատեսված ձեռագրերի երևան գալու հետ: Միջնորդությունը կարող էր վերաբերել ձեռագրի գրչությանը, նկարազարդմանը, նորոգմանը, նվիրաբերմանը, բայց ավելի բազմաթիվ են այն դեպքերը, երբ միջնորդն օժանդակում էր արդեն գրված մատյանի վաճառքին, գրչի համար պատվիրատու կամ գնորդ էր գտնում և ընդհանրապես, ստացողի առաջադրած պայմաններին համապատասխան համաձայնություն էր կայացնում գրչի, ձեռագիր ստեղծողների հետ:

Հայտնի է, որ միջնորդարուժ ձեռագրերը բավական թանկ արժեքի և եթե ազնվադարմ պատվիրատուներն ու բարձրաստիճան հոգևորականները, որոնք հաճախ ամբողջ գրչատներ էին հովանավորում ու գլխավորում, գրչի հետ միջնորդի միջոցով կապ հաստատելու և սակարկելու կարիք չունեին, ապա հասարակական մյուս խավերի քիչ թե շատ ապահովված, բայց դրամի հարկի իմացող ներկայացուցիչները ձեռագիր պատվիրելիս աշխատում էին հնարամոլորին չափ նվազեցնել պահանջվող ծախսը: Նրանք այդ նպատակով նրանք տարբեր գրչատներում էին գրել, նկարազարդել, կազմել տալիս իրենց ձեռագրերը: Նրանք էլ գիրք ձեռք բերելու խնդրով դիմում էին գործին տեղյակ անձանց, որոնք կապ ունեին որևէ գրչատան կամ գրչի հետ և նրանց միջնորդությամբ էին պատվիրում կամ գնում անհրաժեշտ մատյանը:

Ներկայացնենք միջնորդության մի քանի հատկանշական օրինակ. 1332 թ. Գլաձորի շրջանավարտ ներսես Տարոնացի վարդապետը հանգանակությամբ գրած է ժողովում, ուղևորվում է Թավրիզ, թողնելով դնում և վերադառնում Դլաձոր Աստվածաշունչ պատվիրելու համար: Հիշատակարանում այս ամենի մասին հանգամանորեն գրելուց հետո ավելացնում է՝ «գնացի... ի Գայլիձորն և կալայ միջնորդ զՅոնանենէս Մշեցի՝ զեղրայլն իմ հոգևոր, ու անկէ միջնորդութիւն ընդ իս և ընդ երկու գրագիր, ընդ Նփրեմ և ընդ Դաւիթ»⁵: Որոշ մասնակի անց ներսեսը ստանում է բնագրի ընդօրինակությունը, վրձարուժ՝ դրիճերին, ձահուկում մատյանը կազմել է տալիս և վերադառնում իր հայրենի գավառ:

Այստեղ հետաքրքիր է նախ այն, որ թեև ներսես Տարոնացին, ինչպես ինքն է հայտնում, յոթ տարի ուսանել էր Գլաձորում, բայց ձեռագրի գրչությունը պատվիրելու համար դիմել է համերկրացի հոգևոր եղբոր՝ Հովհաննեսի միջնորդությանը: Մնում է ենթադրել, որ միջնորդ ունենալը (սկալայ միջնորդ) ընդունված սովորություն էր:

Հովհաննեսը հիշվում է նաև գրիչ Դավթի հիշատակարանում («...զպատուական րահանայ զՅոհաննէս սպասաւոր բանի»), ուր չի շեշտվում նրա միջնորդ լինելու հանգամանքը:

Ներսեսի մատյանը պատկերազարդել է Թորոս Տարոնացին, կազմել՝

⁵ 1400 թ. Այնթափ՝ հաց գնելու եկած Թավաթալը՝ «տեսնալ զսուրբ Աւետարանս ի ձեռս այլտուղեաց», հացի դրամը տվել ու փրկագնել է ձեռագիրը (Բ. Սարգիսյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրադ մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ. հ. Ա, Վենետիկ, 1914, 10-102): Ուստի բողոքում դերձակ եղբուրեկը փրկագնել է մեկ այլ Ավետարան, հիշատակարանում գրելով՝ «գնեցի ի քրդէ, զի ևր գրի բերած...» (Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. մասն Ա, Երևան, 1955, էջ 187): Ձեռագրերի նման կարգի առեսուրբ պետք է որ շուկայում կատարվեր:

⁶ Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 246:

Մարգարե վարդապետը, բայց Հովհաննեսի միջնորդությամբ վերաբերել է միայն գրչությանը, մի կողմից ստացողի, մյուս կողմից՝ գույգ գրիչների միջև կայացած գործարքին: Ընդ որում, ինչպես պարզվում է Ներսեսի հիշատակարանից, պայմանավորվածությունն այնքան էլ հաստատուն չի եղել, քանի որ նախապես որոշված 1500 դրամ վարձից զատ Դավիթ գրիչը պահանջել է ևս 300 դրամ և ստացողը ստիպված է եղել վճարել այն:

Ամբողջական ձեռագիր պատվիրելու միջնորդության մասին է վկայում Սահպանոս գրչի 1352 թ. Սուրխաթում գրած Աստվածաշնչի հիշատակարանը: Ստացող Քրիստոսատուրի և իր մասին գրելուց հետո, հիշատակարանի վերջում Ստեփանոսը նշում է. «Յիշեսցիք ի Քրիստոս և զՄելքիսեդեկ միայնակյացն, որ բազում աշխատութեամբ և ջանի միջնորդ եղև բանիս և յաւթարեցայց զՔրիստոսաւորն և զմեզ: Տէր Աստուած զվարձս բարեաց պարգևեսցէ նմա...»⁷: Ինչպես տեսնում ենք, սակարկող կողմերին «հոժարեցնելու», համաձայնության բերելու միջնորդի գործն այնքան էլ դյուրին չի եղել:

Ձեռագիր պատվիրելու ժամանակ միջնորդի հանդես գալու հնագույն հիշատակությունը կարելի է համարել մեկ այլ Ստեփանոս գրչի 1194 թ. վկայությունը: Ստացողների մասին նա գրում է՝ «ղստացաւդ գրոցս զԿոստանդին եւ զՂաւկաս յիշատակի արժանի արարէք, որ բաղում աշխատութեամբ սատարեցին ի պէտս գրոցս՝ ի սկզբանէ մինչեւ զկատարումն սորին», ապա նշում է նրանց հոգևոր եղբայրներին և վերջում ավելացնում՝ «եւ զկին ոմն բարեպաշտ, որ եղև առաջարկութեան գրոցս, անուն նորին Հովհաննէս, յիշեսցիք ի Քրիստոս»⁸: Կարծում ենք, որ «առաջարկություն» այստեղ միջնորդելու իմաստ ունի:

Հիշատակարաններում, ավելի սակավ, բայց հանդիպում են նաև ձեռագիր նկարագրողներ, նորագելու, նվիրաբերելու միջնորդներ: 1211 թ. Հաղբատում ուսանող Սահակ Անեցին այստեղ ընդօրինակել է տվել մի Ավետարան (Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), № 6288, «Հասկարար Ավետարան»), այն նկարագրողներն է բերել իր հայրենի քաղաքի Բեխնեց վանք, նկարիչ Մարգարեի մոտ, որից հետո կազմել է տվել Հոռոմոսում աշխատող Աբրահամ կազմարարին: Մարգարեն, որը բնականաբար ավելի վաղ է ձեռնարկել իր գործը, քան կազմարարը, ձեռագրի խորաններից մեկի լուսանցքում պատկերել է վերջինիս և կից գրել՝ «Կազմիչ սորին հայր [Աբրահամ եւ մի] շ[ն]որդ ի սմին յիշեսցիք»⁹: Կազմողն, այսպիսով, հանդիսացել է նաև ծաղկողի և ստացողի միջնորդը, որի համար երախտապարտ Մարգարեն, ստացողի համաձայնությամբ, նրան պատկերել է խորանի լուսանցքում:

1477 թ. Գողթն գավառում Պարսամի որդի Գուլումը գնել, Անանիա արեղայի ձեռքով նորոգել ու կազմել է մի Ավետարան (ՄՄ, № 7779): Ստացողի անունից գրված հիշատակարանում ասվում է. «Կրկին անկամ յիշեցէք յաղաթս Շմաւոն արեղէն, որ միջնորդ կա[ն]կենցաւ Աւետարանիս նորոգելն»¹⁰:

1287 թ. մի Ավետարանի՝ Երզնկայի Ս. Լուսավորչի եկեղեցուն նվիրաբերելու (ստուին ...Աւետարանս ընծայք Սուրբ Լուսավորչիս) միջնորդ է հիշատակվում դերձակ Շահնշահը: Եկեղեցու սպասավոր Հովհաննէս վարդապետը հիշատակարանում գրում է. «Յիշեսցիք եւ ...ՉՇահնշահ դերձակն

⁷ Նույն տեղում, էջ 298:

⁸ Ե—ԺԲ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի. Երևան, 1988, էջ 278:

⁹ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 69:

¹⁰ ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. մասն Բ, Երևան, 1958, էջ 420:

յնդնկեա, որ միջնորդ եղեւ քարեգործութեանս...»¹¹: Պատահում են մեկից ավելի միջնորդներ¹², կան դեպքեր, երբ միջնորդը հանդես է գալիս հին գրքի վաճառքի ժամանակ¹³, սակայն հիշատակարաններում արձանագրված միջնորդության դեպքերի գերակշիռ մասը վերաբերում է նոր ստեղծվող մատանների վաճառքին, նրբեմն միջնորդի օգնությամբ դիմող շահագրգիռ կողմը ստացողն է, երբեմն՝ գրիչը: Մի դեպքում միջնորդը գրչին համոզում է գրել, մյուս դեպքում ստացողին՝ գնել, 1274 թ. Սիս քաղաքում Թորոս ձիավորի (ասպետի) որդի Կարապետը «ի յարդար ընչից իւրոց, ի վայելումն անձին իւրոյ» Հակոբ գրչից ձեռք է բերել մի Մանրուսմունք, Հիշատակարանի վերջում գրիչը նշում է իր հոգևոր եղբայր և գրչության միջնորդ 'Իրիգորին' «...հոգևոր եղբայրն մեր Գրիգոր երէց, որ էրեւ գրել զսա իւրով միջնորդութեամբ, աղաչեմ և գնա յիշել...»¹⁴,

1483 թ. Գուդարքի Ուխտիք դրվակում գրիչ Մելիսեթն ընդօրինակում է Հայսմավուրը (ՄՄ, № 6224), որը «ի հալալ վաստակոց իւրոց» ստացել է ոմն Ամինադ, Հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել «Ստեփանոս նզեպետո իրիցուն, զնա եղև պատեառ գրելո սուրբ գրոցս»¹⁵, 1590 թ. Արծկեում Ներսես գրիչը խանում տիկնոջը վաճառած Ավետարանի հիշատակարանում գրում է. «Այլ և զՏիրատուր հերպետն (յիշէք), որ կամակից եղև ստանալոյ սուրա և յարդարեաց զԽանում տեւեսն՝ ի խնդիր սուրբ Աւետարանիս»¹⁶: 1640 թ. Հովսեփ և Սարուխան գրիչները Սպահանում Ավետարան են ընդօրինակել, որը «ի հալալ վաստակոց իւրոց» ձեռք է բերել տեր Խարակյը, իսկ հիշատակարանի վերջում նշվում է նաև տեր Հայրապետը, «որ կամակից եղև սուրբ Ավետարանիս, եւ գրել և առնու...»¹⁷:

1659 թ. գրիչ Բարսեղն ու ստացող Ավետ Տփղիսեցին հիշատակում են իրենց միջնորդ Վարդանին՝ «որ եղև առիք առ ի ստացումն մատենիս»¹⁸, իսկ գրիչ Հակոբն ու ստացող պարոն Զեյնը՝ միջնորդ Սարգսին՝ «որ քարի սլաքեառ եղև զսուրբ տառիս...»¹⁹:

Այժմ, երբ միջնորդության և միջնորդների մասին որոշակի պատկերացում ունենք, վերադառնանք Անիի՝ վաճառքի համար նախատեսված ձեռագրերին: Դրանք բավական լավ ուսումնասիրված երկու Ավետարաններ են (ՄՄ, №№ 5554, 7635)²⁰, Առաջինը ստեղծվել է XIII դարի սկզբներին քա-

11 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 603:

12 1588 թ. «ի քաղաքս Մոկաց, ի դուռն Անջըղոց Սուրբ Աստուածածին» գրիչ Հովհաննեսն Ավետարան է ընդօրինակում ստացող Մարգարիտի համար, հիշատակարանում նշելով Հովհաննես և Օղուլ քահանաներին, վերջինիս եղբայր Խաչատուրին՝ «որ միջնորդ և ալզեակաճ Եղև սուրբ Աւետարանիս» (Ե. Հալալյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց վասպուրականի. Թիֆլիս, 1915, էջ 708):

13 1423 թ. մի խումբ մարդիկ Ավետարան են վաճառել Անտոն երեցին Արրահամ արեղայի միջնորդությամբ, որը հիշատակարանում գրել է. «Եւս Արրահամ արեղէս միջնորդ և վըկայ ևս...» (Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. Մասն Գ, Երևան, 1967, էջ 361):

14 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 447:

15 Ժն դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 37:


16 Ե. Հալալյան. Ցուցակ ձեռագրաց վասպուրականի, էջ 716:

17 Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. հ. Բ, Երևան, 1978, էջ 827:

18 Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Վ. Հակոբյան. հ. Գ, Երևան, 1984, էջ 855:

19 Նույն տեղում, էջ 902: Միջնորդության օրինակներ տե՛ս նաև ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 539, Ժն դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 225, Ժն դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 413 և այլուր:

20 Ա. Մաթևոսյան. Նշմաններ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության. Բաները Մատենադարանի, № 14, 1984, էջ 119—127, Կ. Մաթևոսյան. Զեռագիր՝ գրված:



Խորան՝ Բեխենց վանքի վանահայր Եղբայրիկի անվան հիշատակությամբ

ղաքի Բեխենց վանքում, որի հովանավորն էր նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցը, վանահայրը՝ Եղբայրիկը (հիշատակվում է 1211 և 1222 թթ.): Քանի որ ձեռագիրը նախատեսվել է վաճառքի համար, ուստի լրագործականությամբ անմիջապես հետո այնտեղ գրչի ձեռքով հիշատակարան չի գրվել, բայց մատյանը ստեղծողները (վանահայր Եղբայրիկ, նկարիչ Տիրատուր, կաղմարար Վանական և այլք) իրենց անունները հակիրճ հիշատակագրությունների ձևով գրել են Ավետարանի խորանների սյուների ու երիզների վրա,

Անի քաղաքի Բեխենց վանքում. — «Պատմա-դանասիրական հանդես», 1984, № 1, էջ 221—225; Т. И з м а й л о в а. Декор рукописей Матенадарана №№ 2952 и 7635. — «Պատմա-դանասիրական հանդես», 1984, № 4, էջ 191—193:

անգամ գիւղադարձերի վարդապետներում, քաջ գիտնականով, որ վաճառքից հետո գնորդ-ստացողը հիշատակարանում պարտավոր չէ իրենց հիշել: Եվ իրոք, ձեռագիրը գնող Դրիդորը, որն այն ժամանակ և ընծայ, նվիրում է Ջարեհանի ուխտին, հիշատակարանում չի նշում մատյանը ստեղծողներին ոչ մեկին, այլ հիշատակում է իր կնոջը, Ջարեհանի միաբաններին, խոսում ձեռագիրը գնելու մասին («...տուաք ի հ[ալ]ալ արդեանց մերոց ի դինս սուրբ Աւետարանիս դահեկան...»²¹): Միակ մարդը, որը հիշվում է թե՛ խորաններում (այսինքն նրա անունը գրվել է մինչև վաճառքը), թե՛ գնորդի հիշատակարանում (գրված վաճառքից հետո) Սիմեոն անունով քահանան է: Խորանի հիշատակագրության մեջ պարզ չե, թե նա ինչ առնչություն ունի ձեռագրի հետ. պարզապես գրված է՝ «Ջմիակեցն զՍիմեոն, որ բնակէր յանապատի, յողորմիս յիշեցէք», մեկ այլ տեղ՝ «Սիմեոն ք(ա)հ(ա)նայ»²²: Բայց ահա ստացողի հիշատակարանից ամեն ինչ պարզ է դառնում՝ «յիշեսցիք... և զՍիմեոն կրանաւոր՝ պատնառ գործոյս...»²²: Այսինքն Սիմեոնը հենց այն միջնորդն էր, որը մի կողմից կապված էր գրչատան, մյուս կողմից ստացողի հետ և նրա գործի՝ ձեռագիրը գնելու և նվիրելու «պատճառն» էր, ուստի ըստ պատշաճի հիշվել է ինչպես գրչատան, այնպես էլ ստացողի կողմից:

Բեխենց վանքի Ավետարանն ունի 278 մագաղաթյա թերթ, գրված է լուրորգով, հարդարված՝ խորաններով, անվանաթերթերով, լուսանցազարդերով, նախատեսված է եղել միջին եկամուտի տեր ստացողի համար, ուստի չի զարդարվել թանկ նյութերով (մասնավորապես ոսկով) և թեմատիկ տեսակներով:

Ուշագրավ է, որ թեև Անիի Բեխենց վանքից միայն երկու ձեռագրեր են պահպանվել՝ այս, և վերը նշված Սահակ Անեցու պատվիրած «Հաղթատի Ավետարանը», որն այստեղ է պատկերազարդվել, բայց երկուսի հիշատակարաններն էլ վկայություն են սլահպանել միջնորդության վերաբերյալ, ինչպես արդեն լուրջ մի դեպքում Սիմեոն քահանայի, մյուսում՝ Արրահամ կազմարարի խաղացած դերը:

Դեղարվեստական հարդարանքի ոճական առանձնահատկություններից դատելով Անիի շրջանից սերող²³, վաճառքի համար նախատեսված հաջորդ Ավետարանը (ՄՄ, № 7635), ի տարբերություն Բեխենց վանքի Ավետարանի, խորաններում միայն մեկ հիշատակագրություն ունի, գրիչ Սոսթենեսի կարճ մակագրությունը՝ «Ջմեղապարտ եւ զանարժան դրի: Մեսսենէս յիշեսցիք ի Տէր»²⁴: Ձեռագրի վերջում գլխավոր հիշատակարանի դրության համար ազատ տեղ է թողնված (էջ 266բ), բայց չի լրացված: Թվակիր առաջին հիշատակարանը դետեղված է 267-ի էջում, գրված է մատյանի բուն գրչության ինչ տարբեր, խոշոր գրով և վկայում է, որ 1249 թ. Ավետարանը Հոռոմոսի վանքին է նվիրել Խաչեղբայրի որդի Ավետյացը²⁵: Այդ համառոտ հիշատակարանում ձեռագրի ստեղծման հետ կապված կամ կողմնակի որևէ այլ հանգամանք չի նշվում, սակայն կասկածից վեր է, որ Ավետյացը ոչ թե


21 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 73:

22 Նույն տեղում, էջ 72—73:

23 Տ. Իդմայլովան այս մատյանի գեղարվեստական հարդարանքի և Իդնատիոս Հոռոմոսի նշանավոր վարպետի ստեղծագործությունների միջև ոճական ընդհանրություններ է նշում, գտնելով, որ Սոսթենեսը զործել է Հոռոմոսում կամ շրջակա գրչատներից մեկում (Т. Хачатурян. Указ. соч.): Այդ ենթադրությունը լրացուցիչ փաստարկ է ստանում ձեռագրի ստեղծման նպատակի վերլուծությամբ, քանի որ նման՝ վաճառքի համար նախատեսված մատյաններ այդ շրջանում հիմնականում քաղաքային միջավայրում էին սխտրտեղծվում ու իրացվում:

24 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 252:

25 Նույն տեղում: Խաչեղբայրն ու Ավետյացը Հոռոմոսին նվիրատվություն են կատարել նաև 1201 թ., այդ մասին թողնելով վիճաբար արձանագրություն:



Էպիտաֆիա Երվանդ Լուսինեայի անվան Վրացական թանգարանում

պատվիրել, այլ գնել է ձեռագիրը, որն ավելի վաղ էր ստեղծվել²⁶։ Ձեռագրի խորանները գծագրվել են մանուշակագույնով, բայց չեն գունազարդվել։ Նման ձեռագրերում գունազարդումը կատարվում էր վաճառքից առաջ և անդրադառնում գնի վրա։ Ի տարբերություն նախորդ ձեռագրի, այստեղ գծված է ստույգ ասել, թե ինչպես է իրականացել մասնաձևի օտարումը,

²⁶ Ձեռագրի գրչության ժամանակի շուրջ կան տարրեր կարծիքներ՝ XI դար. (Յուզակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի, կաղմ. Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթափյան. Հ. Բ, Երևան, 1970, էջ 575), XI—XII դդ. (Գ. Հովսեփյան. Հիշատակարանը ձեռագրաց. Հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 1006), XII դարի վերջ—XIII դարի սկիզբ (Т. И. Заманова. Указ. соч.)։ Վերջին թվագրումը մեզ ավելի հավանական է թվում։

հնարավոր է, որ այդ կատարել է հենց ինքը՝ գրիչը, իսկ ստացողը խուսափելով հավելյալ ծախսերից, գումագարդել չի տվել խորանները:

Թեև Սոսթենենսի ձեռագիրը և Բեխենց վանքի Ավետարանը զարդանկարչությամբ տարրեր են, բայց ունեն կառուցվածքային որոշ ընդհանրություններ: Ձևագրերը մոտ են չափերով. ՄՄ, № 5554՝ թերթի չափը՝ 25×18 սմ, ընդդրի սյունակինը՝ 7,3×5,2 սմ, ՄՄ, № 7635-ում համապատասխանաբար 24,5×18,5 սմ, ե 7,2×5 սմ, երկուսում էլ տողերի քանակը 20 է (երկրորդում երբևէ 19, 21): Ձևագրերն ունեն խորաններ, անվանաթերթեր, լուսանցազարդեր, երկուսում էլ ի սկզբանե ավետարանիչների և տերունական պատկերների շնն նկարվել, իսկ բնագրում շունեն զարդագրեր: Երկու դեպքում էլ ձևագիր ստեղծողներն իրենց անունները գրել են խորաններում, իսկ վերջում աղատ տեղ են թողել վաճառքից հետո հիշատակարան գրելու համար, որը և արվել է գնորդների կողմից ու վերաբերում է մատյանների նվիրարկությանը: Երկու ձևագիրն էլ նախատեսվել են միջին եկամտոտի տեր գնորդի համար և ձևը են բերվել մի դեպքում Գրիգորի, մյուսում՝ Ավետյացի կողմից, որոնք հոգևորական կամ ազնվական չէին (այլապես հիշատակարանում կնշվեր, կակնարկվեր այդ), կարելի է ենթադրել, որ քաղաքային դասի ներկայացուցիչներ էին: Այսպիսով ծաղկուն ու վաճառաշահ Անիում մի կողմից նոր պատվիրատուների շնորհիվ առաջացած գրքի պահանջարկի աճը, մյուս կողմից գրչության արվեստի, արհեստների բարձր մակարդակը, քաղաքային գրչատների առկայությունը պայմանավորեցին նոր տիպի մատյանի՝ վաճառքի համար ստեղծվող գրքի ծնունդը: Առաջին տեղում այստեղ կիրարկվեց նաև այդ գրքի օտարման յուրահատուկ ձևը՝ դրչի ու ստացողի միջնորդի մասնակցությամբ: Այն եկավ գումարվելու դրոյի պատվիրման ու վաճառքի ավանդական ձևին, երբ գրիչն ու ստացողը փոխաբանությունների մեջ էին մտնում անմիջականորեն: Անիի շրջանից հայտնի են նաև այնպիսի մատյաններ, որոնք օտարել են գրիչները, ինչպես օրինակ՝ Իգնատիոս Հոռոմոսցու ու նրա աշակերտ Հովսեփի 1236 և 1237 թթ. վաճառած Ավետարաններն են²⁷:

Պետք է նշել, որ միջնադարում ձևագրերն արհեստավորական ու գյուղատնտեսական արտադրանքի պես շուկայում, վաճառանոցում չէին վաճառվում (այդպիսի վկայություն հայտնի չէ) և ոչ այն պատճառով, որ թանկ արժեքն, այլ որովհետև գրքի՝ սուրբ գրքի վաճառքի նկատմամբ գոյություն ուներ լուրջ և զգուշավոր վերաբերմունք: Հարյուրավոր օրինակներ կան, երբ այս կամ այն եկեղեցուն նվիրաբերված ձևագրի հիշատակարանում անիծվում է ոչ միայն նա, ով կփորձի գողանալ, այլև նա, ով կվաճառի կամ գրավ կհանի մատյանը (սով ծախել կամ գրանկնէ՝ զմասն Յուդային առցէս²⁸): Իսկ երբ մեկը, թեկուզ իր սեփական Ավետարանը վաճառում էր մեկ ուրիշին, սուրբաբար հիշատակարանում (վաճառքի գիր) տասնյակ վկաներ հաստատում էին այդ գործարքը, որպեսզի հետո վաճառողի տոհմակիցներից մեկն ու մեկը ռզավի շանի²⁹: Հասկանալի է, որ նման դեպքերն ուղղակիորեն համեմատելի չեն վաճառքի համար նախատեսված ձևագրերի առևտրի հետ, բայց ակնհայտորեն ցույց են տալիս այն պատկառանքը, որ կար ձևագրավաճառության գործի նկատմամբ: Թերևս այս իրողությունը շնորհիվ միջնորդի դերն ավելի էր կարևորվում:

Փաստերը վկայում են, որ ձևագիր ձևը բերելիս միջնորդների օգնությամբ ավելի հաճախ դիմել են քաղաքային միջավայրից սերող մարդիկ՝ առևտրականներ ու արհեստավորներ, զանազան պաշտոնյաներ, տանուտերեր ու պարոններ, մասամբ՝ հոգևորականներ: Պատահում էր, որ մի եկե-

27 Կ. Մ ա թ ե ո ս յ ա ն. Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի.—«Բաներ Երեմիայի համայնարանի», 1982, № 1, էջ 128—131:

28 Ժե դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 166, 188, 285, 446 և այլուր:

29 Նույն տեղում, էջ 373, 462, 504 և այլուր:

ղեցու սպասավորները իրենց ուխտին միաբանված ունևոր անձանց առաջարկում էին ձեռագիր պատվիրել (գնել) ու նվիրել այդ եկեղեցուն, հոգալով նաև միջնորդության մասին: Բնորոշ է 1231 թ. Ստոկիա քաղաքում ստեղծված մի Ավետարանի օրինակը (ՄՄ, № 10688), ուր գրչի և ստացողի միջև միջնորդի դեր է կատարել հենց այն եկեղեցու սպասավորը, որին գրչությանից հետո նվիրվել է ձեռագիրը: Հիշատակարանում նախ գրիչը նշում է, որ Անտոն քահանան «առիթ և կամակից» է եղել գրչությանը, ապա ստացողն իր հիշատակարանում հայտնում է, թե մատյանը հանձնել է Ս. Թորոս եկեղեցուն՝ «ի ձեռն և ի հրաման Անգոն քահանայի, որ պիտուի լին անէս»³⁰:

Միջնորդների գործունեությամբ շահագրգռված էին նաև խոշոր գրչատները: Այս տեսակետից բնութագրական է Աղթամարի գործունեությունը, որը XIV—XVI դդ. հայ իրականության մեջ ամենակազմակերպված ու բեղուն գրչության կենտրոնն է հանդիսացել: Այստեղ աշխատում էին վարպետ գրիչներ ու ծաղկողներ, որոնց մոտ մեծ թվով ձեռագրեր էին պատվիրում Վանա լճի շրջակա քաղաքների ու գյուղերի բնակիչները: Մանթանանք Աղթամարի գրչատանը միջնորդների մասնակցությամբ ստեղծված կամ վաճառված մի շարք մատյանների:

1333 թ. գրիչ Կարապետ տանուտեր Հակոբի համար ձեռագիր է ընդօրինակել, որն այն նվիրել է Վանի Ս. Սահակ եկեղեցուն (ՄՄ, № 4674), Հիշատակարանում նշվում է Ստեփանոս կրոնավորը՝ «որ եղև միջնորդ այսմ բարի գործոյ...»³¹:

1378 թ. մեկ այլ Կարապետ Թումա կրոնավորի պատվերով ընդօրինակում է Նարեկացու Մատյանը (ՄՄ, № 5558)՝ հիշատակարանի վերջում գրելով. «Կրկին աղաչեմ յիշեսցիք ի Քրիստոս զԿարապետ կրանաւորն, որ աջխատեցաւ ի դալ և երթալն և միջնորդ եղև այսմ բարի գործոյ»³²: Ինչպես երևում է, այս դեպքում միջնորդը նաև հետևել է պատվերի կատարման ընթացքին: 1385 թ. Թումա եպիսկոպոսը Աղթամարում գնել է Զաքարիա գրչի ընդօրինակած մի Ճաշոց (ՄՄ, № 4870) և նվիրել տեղի Ս. Խաչ եկեղեցուն (սեռ զսա նուեր և ընծայո): Հիշատակարանի վերջում կարդում ենք. «...յիշեսցիք ... զաստուածասէր տաճաւաւորն՝ զԿիրակոս և զտէր Խաչիկ և զծնաւոյն նոցին, որ միջնորդ և առիթ եղեն այսմ բարի գործոյ...»³³:

1461 թ. Ներսես եպիսկոպոսն իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում որևէ ստացողի անուն չի տալիս, բայց վերջում գրում է. «Զմիջնորդ սուրբ Աւետարանիս զԽաչատուր և զծնողսն իւր յիշեցէք ի Քրիստոս»³⁴:

1462 թ. Գրիգոր գրիչը տասնյակ ստացողների պատվերով Ավետարան է ընդօրինակել (ՄՄ, № 7632), որը նվիրվել է Մնչկանց գյուղի եկեղեցուն: Հիշատակարանում խնդրում է հիշել՝ «զԱտոմ հեղահոգե հերպետն զՇահմելեքենց և զԱրմանշէն, որ յորդարիչ և միջնորդ եղեն այսմ բարի գործոյս»³⁵: Նույն գրիչը մեկ տարի անց ընդօրինակել է Հորգոմ գյուղի եկեղեցուն նվիրվելիք Մաշտոց (ՄՄ, № 2788) Առաքել Աղթամարցու, իսկ 1470 թ.՝ Ավետարան (ՄՄ, № 4970)՝ Հովհաննեսի և Գրիգորի միջնորդությամբ³⁶: 1476 թ. տանուտեր Միրենց Սարգսդեն և նրա տոհմակիցները Թումա գրչից ձեռք են բերել մի Ավետարան (ՄՄ, № 5333) հիշատակելով «զտէր Յովսէփն Շիրինենցն, որ յորդարիչ և միջնորդ եղև սուրբ Աւետարանիս...»³⁷: Նույն գրի-

30 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 173: Մեկ այլ նման օրինակ տե՛ս նույն տեղում՝ էջ 787—788:

31 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 260:

32 Նույն տեղում, էջ 527:

33 Նույն տեղում, էջ 554:

34 ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 163:

35 Նույն տեղում, էջ 185:

36 Նույն տեղում, էջ 199, 305:

37 Նույն տեղում, էջ 407:

լր 1499 թ. համոշ հաթունի պատվերով ընդօրինակել է Մաշտոց (ՄՄ, № 6326), որը ստացողը նվիրել է Բաականց գյուղի եկեղեցուն: Հիշատակարանի վերջում թվարկվում են «ղաստուածասէր ատնուաւէրքն՝ զրոհս հալատուրն, և զՍտեփանոսն, և զմիւս Ստեփանոսն Բքոցն, և զորդին զԿարապետն, որ յորդորիչ և միջնորդ եղեն սուրբ գրացս...»³⁸:

Ինչպես տեսնում ենք, Աղթասարի զրչատան հետ առնված ստացողները հաճախ են գիմել միջնորդների աշակցությանը, իսկ վերջիններիս թվում քիչ չեն եղել տանուտերերն ու այլ աջխարհականներ:

Այսպիսով, անդրադառնալով հայ ձեռագրական մշակույթի պատմության ցայժմ չքննված մի քանի հարցերի՝ գրչի և ստացողի միջնորդի դերին, միջնորդության տարրեր զրսևորումներին, վտճառքի համար նախատեսված ձեռագրի ի հայտ գալուն ու նրա օտարման ձևի խնդրին, գալիս ենք հետևյալ եզրակացության. ա) միջնադարյան Հայաստանում վաճառքի համար նախատեսված ձեռագրերը երևան են եկել XIII դարի սկզբներին, որպես երկրի ու հասարակության բնականոն զարգացման արդյունք: Նման ձեռագրերի հայտնի վտղտգույն օրինակները ծագում են Անի քաղաքի շրջանից: բ) Ձեռագրերը վաճառվել են կամ անմիջականորեն գրիչների ձեռքով, կամ առանձին միջնորդների աշակցությամբ, որոնք զործնական կապ են իրականացրել գրչի (զրչատան) ու ստացողի միջև: գ) Միջնորդներին գիմել են ձեռագրի պատվիրելիս, ղեկիս, ինչպես և այլ դեպքերում, իսկ դիմողների թվում սեռակցուն են քաղաքային միջավայրից սերած մարդիկ:

Ամելացնենք նաև, որ հիշատակարաններում միջնորդները, որպես կանոն, ականածանքով ու երախտագիտությամբ են հիշատակվում թե՛ գրիչների, թե՛ ստացողների կողմից, իսկ ընդհանուր առմամբ նրանց զործը զգալի նպաստ է բերել հայ ձեռագրական մշակույթին:

ПОСРЕДНИК ПИСЦА И ПОЛУЧАТЕЛЯ

(Книга, предназначенная для продажи в средневековой Армении)

К. А. МАТЕВОСЯН

Резюме

Многочисленные памятные записи (колофоны) армянских рукописей свидетельствуют о том, что во время заказа или купли рукописных книг часто появляются посредники (միջնորդ), которые способствуют налаживанию сделки, помогая обеим сторонам—писцам и заказчикам, договариваться о цене и о других подробностях будущей книги. К посредникам чаще всего обращались люди из городской среды, подключение которых к числу традиционных заказчиков книги—духовенству и дворянству, резко увеличило спрос на рукописи. В этих условиях, в начале XIII в., на фоне общего подъема культурной жизни и расширения сферы денежного обращения в центре страны в городе Ани, а затем и в других местах появляются книги, изготовленные на продажу, без предварительного заказа. Такие рукописи, однако, не продавались на рынке, как ранее предполагалось, а реализовывались из скрипториев непосредственно из рук писцов или с помощью посредников. Самыми ранними известными нам экземплярами подобных книг являются Евангелия, из района Ани, ныне хранящиеся в Матнадаране—№№ 5554 и 7635. Характерен пример крупного скриптория Ахтамара, многие рукописи которого были заказаны или проданы при содействии посредников.

³⁸ ՎՍԳ Գրչի հիշատակարաններ, մասն Գ, էջ 285: